Ցիսուսի։... Արդ, քրիստոսապարգեւ Աւետարանս գրեցաւ ի թվականիս Հայոց ՌՀԷ, ի հայրապետութեան Տեառն Տէր Մելքիսէթ կաթողիկոսին, ի թագաւորութեան Ուլխաց երկրիս Միրօնին, և եպիսկոպոսութեան ինձ նուաստիս, որ գրիչս գրեցի. և աւագերիցութեան Տէր Անդրէասին, և երեսփոխանութեան Ծերիկին. ի մայրաքաղաքս Սեչով, ի անուանի հրեշտակաբնակ վանք Ս. Գաբենդի։ Այլ և յիշեցէք ի Քրիստոս զԱրապիոն և զԱրգիս տիրացուն՝ որ զսուրբ աւետարանս կապեցին. այլ և յիշեցէք ի Քրիստոս զՏէր Անտոնն և զՏէր Աւետիքն. և որ զմեզ յիշէ կամ Հայր մեր ասէ՝ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւետեանս. ամէն. Ո՛վ դիս զդառնացեալս։

Այլ և յիշեցէք զանարժան մեղաւոր Ասլատուրս, որ եղեւ պատճառ սուրբ աւետարանիս, յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին. թվ. ՌՁԳ (1634)։ — Յիշատակ է սուրբ Աւետարանս Կորոսեցի Մանվէլի որդի Մկրտչին ի դուռն Սիլիսղրու Ս. Աստուածածնին եկեղեցուն. թվին ՌՃՂԴին (1745–6) և յուլիսի մէկին. աւարտեցաւ ձեռամբ ձեր ծառայից ծառայ անպիտան Սարգսի։... Յիշեցէք զՄկրտիչն մէկ Հայր մեղայով։ [Աւետարան ի Ռուսաձոզ։]

1629·

Գրեցաւ Տօնացոյցս այս ի հայրապետութեան այսմ նահանգի Տէր Մովսէս կաթողիկոսին, և ի թագաւորութեան Ցռանգագ ազգի Գ Ջիկմունդին, ի թվաբերութեան Հայոց ՌՀԷ, և ի յամսեանն դեկտեմբերի ԻԳ, ի վայելուչն Պր. Վարդերես դպրի, որդւոյ Պր. Գրիգորին. Աստուած բարով վայելել տայէ նմա ընդ երկայն ժամանակաւ. և գրեցաւ ձեռամբ մեղաւոր և անարժան Վարդերես սարկաւագի։ Աղաչեմ, ով եղբարք, յիշեցէք զիս զմեղաւորս՝ ի սուրբ յաղօթս ձեր. և Աստուած զձեզ յիշէն։ [Բրեւանեան Մոզեռն]։

1629–30·

Գրեցաւ սուրբ գիրքս որ կոչի Ցայսմաւուրք՝ ի թուականութեանս Հայկազն սեռի ՌՀԸին, ի կաթողիկոսութեան Էջմիածնայ Տեառն Տէր (պարապ) և առաջնորդութեան Օլախաց երկրի Տէր Ղազար վարդապետին, աւագերիցութեան Տէր Անդրէասին, և երեսփոխանութեան Պր. Ծերիկին, և այլ քահանայիցն, Տէր Յովանէսին, Տէր Ղուկասին, Տէր Ղազարին, Տէր Վարդանին, Տէր Աւետիքին, Տէրտէր Սիմէոնին. նորընծայիցն՝ Տէր Աստուածատուրին և միւս Տէր Աստուածատուրին, Տէր Մովսէսին. և թագաւորութեան ... Պարոնին։ Գրեցաւ յերկիրս Օլախաց, ի քաղաքն Սեչով, ընդ հովանեաւ վանորէիցս՝ Ս. Հաճկատարի և Ս. Ըստատիոսեանցն և Ս. Լուսաւորչին. քանզի սկիզբն ի Հաճկատարն արարի և յաւարտն ի Ս. Օգէնտ. ձեռամբ անարժանիցս մեղապարտ Սրապիոնի և ցաւթան? Սարգիս դպրի. ի խնդրոյ